

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Այգեշատ համայնքի

Ղեկավարի 2015թ-ի 1-ին կիսամյակի

Ես՝ որպես Այգեշատ համայնքի ղեկավար, ներկայացնում եմ 2015թ-ի առաջին կիսամյակի ընթացքում համայնքում կատարված աշխատանքների մասին:

Տարեսկզբին ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի բյուջեն, որի կատարմանը սահմանված կարգով կատարվել է հսկողություն:

Համայնքի հասարակական կարգի պահպանման համար սահմանվել է հսկողություն գիշերային ժամերին, որը իրականացվում է ինչպես ավագանու անդամների, այնպես էլ աշխատակազմի միջոցով: Այս աշխատանքների շնորհիվ բավականին պակասել են անկարգություններն ու գողությունները: Աստիճանաբար հաստատվում է կարգապահությունը համայնքում:

Համայնքի փողոցների բոլոր խաչմերուկներում անցկացվել է գիշերային լուսավորություն:

Նոր-տարին դիմավորելու համար զարդարվել է համայնքի հրապարակում գտնվող հուշարձանին հարակից եղնիները:

Տարեսկզբին նոր-տարվա առիթով կազմակերպվեց Ձմեռ պապու այցելությունը բնակիչների տները և 1-ից մինչև 6 տարեկան երեխաներին բաժանվեց նվերներ:

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի շնորհիվ փետրվարի 13-ին Տյարըն ընդառաջի տոնի կապակցությամբ կազմակերպվեց միջոցառում համայնքի թվով 24 նորապսակների եկեղեցում կատարվեց ծիսակատարության կարգը այնուհետև արարողությունը շարունակվեց համայնքի կենտրոնում արարողակարգի համաձայն, նորապսակներին բաժանվեցին նվերներ:

Միջոցառմանը ներկա էին երկիր մեղիա հեռուստաընկերության լրագրողները, միջոցառումը նկարահանվեց և ցուցադրվեց:

Գյուղապետարանի աջակցությամբ դպրոցի ուսուցչական և աշակերտական կազմը, ինչպես նաև համայնքից այլ բնակիչներ ապրիլի 24-ին այցելել և ծաղկեպսակ են դրել եղեռնի զոհերի հուշարձանին:

Մայիսի 9-ին՝ հաղթանակի օրվա առթիվ կազմակերպվել է միջոցառում, որի ժամանակ պարզևատրումներ է հանձնվել հայրենական պատերազմի վետերաններին:

Ավագանու հաստատմամբ սոցիալական օգնություն է տրվել համայնքի թվով 28 առավել անապահով ընտանիքներին:

Գյուղապետարանի միջոցներով կառուցվում է բուժկետ, որի շինարարական աշխատանքները շարունակվում են մինչ օրս:

2015թ.-ի ընթացքում համայնքում կատարվել են բավական աշխատանքներ կոմունալ ծառայությունների բնագավառում:

Բավականին աշխատանք է կատարվել պաշտպանության բնագավառում: 2015թ-ի ամառային զորակոչի համար ավտոդպրոցում նախապատրաստվել և զորակոչվել են երեք զորակոչիկ, և մեկնել են զինծառայության: 2015թ-ի զորակոչի պլանը կատարվել է 100%-ով:

Հաշվետու տարում համայնքում կատարվել է կենդանիների համաճարակային պատվաստումները հատկապես խոզի գրիպի դաբադի և բրոցիլոզի դեմ: Կազմակերպվել և այժմ էլ կատարվում է աղբաթափություն ամիսը 4-անգամ շաբաթական 1-օր:

Կազմակերպվել և կատարվել է համայնքի բնակավայրերից դուրս ճանապարհների եզրերին տարիներ շարունակ կուտակված աղբի մաքրման և տեղափոխման աշխատանքները: Կատարվել է համայնքի փողոցների լայնացման և մաքրման աշխատանքներ:

Աշխատանքներ են կատարվել Վաղարշապատի ՋՕՄ-ի հետ համայնքի Ուրց-Կոտայք Շամիրամ գոտուց օգտվող ջուր օգտագործողներին ժամանակին ջրով ապահովելու համար: Տեղադրվել է նոր ջրհան պոմպ որը սպասարկում է համայնքի մի մասին թեթևացրել է Քասախ գետից օգտվող հատվածի ծանրաբեռնվածությունը:

Աշխատանքներ են կատարվել համայնքի Քասախ գետից սնվող Սարի-Առու կոչվող ջրատարները մաքրելու և որոշակի մասերում բետոնապատման աշխատանքներ կատարելու ուղղությամբ:

Ժամանակին կազմակերպվել է հացահատիկի բերքահավաքը:

Այսքան կատարված աշխատանքների հետ մեկտեղ կան նաև որոշակի դժվարություններ, որոնք խոչընդոտում են գյուղատնտեսության զարգացմանը:

Հաշվետվությանը ներկա էր Արմավիրի մարզի կրթության բաժնի վարիչ
Գայանե Սայադյանը;

14.07.2015թ